

A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ
THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 12.

ՅՐԷՉՆՕ, ՔԱԼ. ՇՄԱԹ, ՆՈՅ. 1, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

—0—

—Անցեալ Շաբաթ երեկոյ տեղի ունեցաւ Քըթնըր Հօլի մէջ Հայոց Քաղաքական Ակումբի երկրորդ հրապարակային ժողովը՝ ի ներկայութեան խառն բազմութեան մը: Ժողովին նախագահեց Տ. Յ. Սերոբեան և խօսեցան Ռամկավարականաց կողմէ զրկուած քանի մը կարող աստեանարաններ: Ժողովը բացուելէն անմիջապէս վերջը հրաւիրուեցան ու ներկայացուեցան ժողովրդին տասն և մէկ ընտրելիներ, որոց իւրաքանչիւրը իր ձգտած պաշտօնին նկատմամբ ու պարագային յարմար քանի մը խօսք ըսաւ: Այս ընտրելիները, որք Կեդրոնական Յանձնախմբի խնդրանք կուգային հայ ժողովրդին ներկայանալ, հետեւեալք էին՝ Տիարք Հընչ, Չիթնտըն, Ըմիթի, Հանքաք, Քալընա, Լէյն, Թըրնըր, Չըրչ, Մաք Քարտըլ, Մայս, Պրիթէն և Տըթ. Քալըն: Ասոնցմէ վերջ խօսեցաւ Կեդրոնական Յանձնախմբի Նախագահը՝ անուանի փաստարան Վ. Տ. Գլոթ որ բողոքեց Հանրապետականաց այն կարծիքին դէմ թէ հայերը իրենց քուէն կուտան եղեր՝ քանի մը հանրապետականաց հրահանգին համաձայն: Սակայն, ըսաւ աստեանախօսը, Հայոց կողմէն մեզ ալ լսելու այս փափաքն ու հրաւերը ինքնին սպառնոյց մըն է թէ Հայք երկու կողմերն ալ լսել է կշռել վերջ միայն իրենց քուէները կուտան՝ իրենց՝ և ոչ թէ ուրիշներու որոշած անձին: Խօսելով չամիչի մասին՝ ըսաւ ի մէջ այլոց թէ ի՞նչ 200 էյքը այդի մը տէրը ըլլալով հանդերձ՝ աստեանախօսական մ'էր տակաւին, վասն զի վստահ էր թէ չամիչին գինը յարաբերութիւն չունէր այս կամ այն կուսակցութեան վարդապետութեանց հետ:

Երկրորդ խօսողն էր Ճ. Վ. Քորթրայթ: Սա՛ շատ յաջող կերպով փետտեց այն ամեն ատենախօսները որոնք եկեր Հայոց ըսեր էին թէ քաղաքականութիւնը առետուր (պիզնիս) մ'էր միայն: Հայք չէին կրնար, ըսաւ, հանրապետական այսպիսի խաբէութեան մը հաւատ ընծայել՝ քանի որ կը վերաբերէին այնպիսի ազգի մը որ սկզբունքի մը համար կապրի և կը կըռուի միշտ, և ցոյց տուաւ շատ յաջող կերպիւ թէ միակ և հիմնական խնդիրը՝ սկզբունքի խնդիր էր երկու կուսակցութեանց մէջ: Մաքսի հարցը բացատրեց շատ յստակ կերպով և ցոյց տուաւ թէ ինչո՞ւ համար անհրաժեշտ էր կարգ մը ապրանքներուն մաքսը թեթեւցնել մի քիչ, մատնանիչ ըրաւ "Թրըսթներու" սպառնացած մեծ վտանգը, և զանոնք տապալելու միակ

միջոցը: Ատենախօսը, որ գաւառիս այժմեան 'քանթի քըրքն' է և նախկին այգեպան մը, չամիչի խնդիրը՝ ուրիշ ու է Ֆրէզնոյցիէ աւելի՝ խիստ մօտէն սերտած ու խնտատախրած էր անշուշտ: Հանրապետականներու ամենէ մեծ փաստը՝ չամիչի խնդիրը բացատրելու և անոնց այս մասին յառաջ բերած ենթադրութիւնները բեկանելու համար՝ շատ մը կտորներ կարգաց խիստ շահեկան տեղեկագրէ, մը գոր ժամանակ առաջ հրատարակած էր՝ կառավարական և ուրիշ անվիճելի աղբիւրներէ քաղելով իր տեղեկութիւնները: Այս տեղեկագրին տեսնուեցաւ որ չամիչին գինը քանիցս շատ բարձրացած էր Ռամկավարականաց օրով. քանիցս ալ, էր բարձր մաքս կար անոր վրայ, չափազանց վար ինկած էր՝ վերջի 15 տարիներուն մէջ: Մաքսը տարբերութիւն մը չըներ, ըսաւ, այն ապրանքներու գներուն վրայ որոնցմէ ամեն տարի Եւրոպայ կը զրկուի ասկէ. Չամիչը սպէ կարգին կը վերաբերի. Մաքսը չէ որ անոր գինը փոփոխութեան կենթարկէ՝ քանի որ ամեն տարի հազարաւոր թօնօ Եւրոպա կը զրկենք անկէ ու մեր գներով կը վաճառենք հոն: Այս փաստը անհերքելի էր և գուցէ նորութիւն՝ Հայ Հանրապետականաց համար՝ որք ծափահարութեանց մասնակցելով՝ իրենց գահունակութիւնը ցոյց տուին:

Ատենախօսը՝ Քիլվինտի վերջի վարչութեան օրով տիրող անձկութեան մասին խօսելով՝ ցոյց տուաւ թէ Ռամկավարականք չէին անոր պատճառը, ինչպէս որ Հանրապետականք պատասխանատու չէին այն հին քանի մը տագնապներուն որք պատահած են իրենց վարչութեանց օրերով: Քորթրայթ ցոյց տուաւ թէ անձկութիւններն՝ մի և նոյն ժամանակ և մի և նոյն ատեն՝ կը տիրէին բոլոր միւս ազգաց վրայ որոց մէջ Ռամկավարականք գոյութիւն իսկ չունին:

Ժամը 11 էր երբ վերջի ատենախօսը՝ Մայքլս Վալլիս խօսիլ սկսեց: Ժամանակը ուշ ըլլալուն՝ ատենախօսը հազիւ կարողացաւ թրըսթներու և ուրիշ քանի մը յարակից խնդիրներու վրայ քանի մը խօսք ըսել: Իսկ հայ ատենախօսներու համար ընաւ ժամանակ չի մնաց:

—Էմմա Փատըք Թիլֆըրտ՝ Նիւ Եորք Հէրըլտի Հոկտեմբեր 19ի Կիրակի օրուան թերթին մէջ ընդարձակ յօդուած մը կը հրատարակէ "Հայկական խոհանոցի մէջ" վերնագրով, յորում կը նկարագրէ մեր Հայրենի խոհանոցը. գովեստիւք կը խօսի հայ տանտիկնոջ խոհարարութեան մասին. անոր կերակուրներէ շատերը կը գովէ, պատրաստելու եղանակը կը պատմէ ու կը յանձնարարէ Ամերիկացւոց:

—**ՀԱՇՏՏՈՒԹԻՒՆ:** Հայ Երկրական եկեղեցւոյ ժողովրդեան մէջ երկար ատենէ ի վեր գոյութիւն ունեցող ծանօթ կռիւներն ու խռովութիւնները վերջ մը գաւան շարժումս մէջ, ու բաժանեալ հաստատմանը հաշտուեցան վերջապէս. իրարու անհաշտ թշնամի կարծուած շատ մը ծանօթ անձինք ողջագուրեցին զիրար՝ Հինն ու անցեալը կատարելապէս մոռնալու խոստումով: Չորեքշաբթի երեկոյի համար՝ նոյն եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէն, քանի մը նորեկ ու աղբեցիկ ազգայիններու թելադրութեամբ, խառն ժողով մը կանչուած էր յիշեալ եկեղեցիին մէջ, հոն ներկայ էին երեսուցի չափ ներկայացուցիչ անդամներ ու հաշտարար ազգայիններ: Ժողովը բացուեցաւ նախագահութեամբ Ս. Մ. Մինասեանի, և յետ երկարատե խորհրդակցութեանց՝ եօթը անդամներէ բաղկացեալ լիազօր յանձնախումբ մը ընտրուեցաւ, որուն պաշտօնը պիտի ըլլար բոլոր առկա ինդիւնները ու դժուարութիւնները քննել ու վերջնական վճիռ մը տալ՝ պայմանաւ որ տրուած որոշումները պարտաւորիչ ու ընդունելի ըլլան ամենուն համար: Այս յանձնախումբին անդամներն են՝ Ս. Մ. Մինասեան, Փրօֆ. Մելքոն, Փրօֆ. Մալարեան, Տ. ք. Մելքոնեան, Տ. ք. Ալէքսանդրեան, Պատ. Քարաչատեան և Գրիգոր Նալպանտեան: Յանձնախումբըս որոշած է դրամ հաւաքել անմիջապէս՝ Պատ. Ֆիլեանի Հին ամսականները վճարելու համար: Պատուելին հարկ է ըսել թէ հրատարած է իր պաշտօնէն՝ իբր մէկ ամիս առաջ: Վաղը պիտի քարոզէ Փրօֆ. Մելքոն:

—**Տ. ք. Բարսեղեանի և Յ. Էփտէրեանի ծանօթ դատը սկսեց անցեալ Հինգշաբթի օր՝ դատաւոր Չըրչի առջև:** Լրագիրս մամուլ զրկուած ժամանակ—Ուրբաթ կէսօր— դեռ պահանջատիրոջ վկաներուն հարցաքննութիւնը աւարտած չէր:

—**Գաւառիս Ռամկավարականաց կողմէն ընտրական պայքարը գոցուեցաւ Հինգշաբթի երեկոյ՝ մեծ ժողովով մը որ տեղի ունեցաւ Պարթըն Օփերա Հաւրի մէջ:** Ժողովին նախագահն էր Տանթի Փրինս: Պատուոյ նախագահներուն մէջ մեր ազգայիններէն կային Տ. ք. Ղազարեան, Տ. ք. Ֆէշիշեան, Կ. Հայագործեան և Յ. Յովսէփեան: Ատենախօսներն էին՝ Մայրու Վալիս, Կասթոն Աշ և Վ. Ա. Կէթ:

—**Այս երեկոյ ալ Հանրապետականք իրենց փակուած մեծ ժողովը կուսնանոն նոյն թատրոնին մէջ:** Ժողովին պիտի նախագահէ Տ. ք. Բաւլ. խօսողները պիտի ըլլան՝ Ծերակուտական Փըրքինս, երեսփոխանք Միտքաֆ և Նիտհրմ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

—0— Պոսթըն, Հոկտեմբեր 15

Նամուկս ուշացաւ: Բայց Լեւչպէս գրեմ՝ երբ անձրեւը անընդհատ կը տեղայ ու այս մերամաղձոտ օդը զիս չը ներշնչէր: Երանի ձեզ որ աշնան այս լալկան օրերուն մէջ իսկ, թուչնոց երգերովը կորօրուիք ու ծիծաղկոտ բնութեան մը հազար ու մէկ հպուսները կը վայելէք:

Միայն արեւը չէ որ կը բացահայտ մեր գլխէն: Մեր օճախներուն մէջ ամուխ կը պակտի, և եթէ այս պինդգուռի հանքառէրները մօտ օրերս գործաւորներու պահանջին չը զիջանին՝ ձմեռը անկողիններէս դուրս չեմնել պիտի որոշենք, ազինք չուզենք:

Ընկերական սեսակէտէ նոր լուր մը պիտի չունենայի ձեզ հաղորդելու եթէ բազմաթիւ ընկերութիւնը լոյս չի տեսներ այնպիսի ատեն մը երբ ամեն մարդ՝ սուսնոց ամուխի՝ քնքղինքը տաքցնելու միջոցին վրայ կը խորհի: Ո՛չ ապաքէն Հայկայ թուներն ալ հասկըցած են թէ հարկը հնարագիտութեան մայրն է:

—**Իւրպէն Առհիէս հայրուհիները գաղղիացի հրապարակագիրը, հոս էր անցեալ շաբթու:** Արեւիկի երեկոյ հայերուն փոսեցաւ ինքնապաշտպանութեան սուսուլութիւններուն վրայ. քանի մը օր վերջն ալ՝ Նիլընտ փողոցի հայկական ճաշարանին մէջ քանի մը է-զսք և քանի մը չէ-զսք անձերու կողմէ տրուած հայկեցի մը վայելեց:

Կերակուրներու և բաժակածառերու մատին գաղափար մը կաղմելու համար՝ անհամբեր կը պատենք պաշտօնական տօքումաններու հրատարակութեան: Աւայտմ բերնէ րերան սա լուրը կը պտտի թէ երբ սեղանին վրայ պնակով քիւֆիթ կը դնեն՝ Իւրպէն Առհիէ կ'այլազունի՝ կտր գնտակները ու ժամակ կարծելով, բայց երբ հայ քաջերէն մէկը այս բանը կը նըկատէ՝ անմիջապէս ձեռքովը հատ մը բերանը տանելով կը խածնէ. Գաղղիացի կոչնականը՝ իր սխալը զգալով խնդուցեր է, թէն տակաւին հասկցուած չէ թէ ինչու կը իր սխալմունքին թէ հայուն անքաղաքավարութեան վրայ էր:

Մանրամասնութիւնը յաջորդու . . . :

* * * * *

Պոսթմնի քտալացիները երէկ Քոլմպուսի Ամերիկայ գանելուն չեմ պիտեք քանիտորդ ստրեղարձը տօնեցին, մինչդեռ պատմութիւնը իր վճիռը բաժարձակապէս տուած չէ թէ Քրիսթոփոր Իտալացի էր, Սպանիացի . . . կոմ Հայ: Չի մոռնանք սակայն սա իրողութիւնը թէ սխալմունքնով գտնուած երկրի մը մէջ է որ կապրինք:

* * * * *

Ազգային ինդիկներու գործադուրը կը շարունակուի տակաւին սեղոյս հայ թերթերուն մէջ: Կոչնակի վերջնութիւն խմբագիր՝ Պատ. Հայկակ Խաղոյեան Քալիֆօրնիա մեկնեցաւ՝ հանդերձ ընտանեօք և զուակօք: Եարունակելու . . . :

* * * * *

Վերջի պահուս կը լսենք թէ նոր կուսակցութիւն մը կողմել կը խորհուի, որուն նարտակը պիտի ըլլայ՝ արդէն կազմուած երկու կուսակցութիւններուն խօսք հասկցնել տալ. ասկէ վերջ չորրորդ կուսակցութիւն մ'ալ կազմել հարկ պիտի ըլլայ՝ այս երրորդ կուսակցութեան օքրիչի գործին չի խառնուիլ սորվեցնելու համար. և այսպէս շարունակուի մինչև որ Հայաստան սպասուի ինքնաբերարար:

Ամչնանք սակայն և սթափինք. ՊԻԾԱԿ

Մ Ս Ն Ա Գ Ո Յ Ժ

—0—

Անցեալ Կիրակի օր իւր մահկանացուն կնքեց Յովհաննէս Քալաճեան որ երկար ատենէ ի վեր հիւծախտէ կը տառապէր: Հանգուցեալը կը թողու այրի մը և երեք անչափահաս զաւակներ՝ շատ կարօտեալ վիճակի մը մէջ: Յուզարկաւորութեան հանգէսը կատարուեցաւ անցեալ Քչ. օր Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ, ու թաղումը տեղի ունեցաւ Հայոց գերեզմանատունը: Քալաճեան Ֆրէզնօ եկած էր երկու տարիի չափ առաջ՝ ապրօքինելու յոյսով: Վերջի քանի մը ամիսներէն ի վեր՝ օրապահէի մը շինելու համար՝ Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ մաքրութեան հոգ կը տանէր իր կնոջ հետ միասին:

*** Ո Ս Կ Ե Փ Ո Ր Ի Կ ***

—*—

- ** Տըթ. Ղազարեան, ատամնագործ:
- ** Ամեն տեսակ սերտեր՝ Թ. Ճ. Համբնտի քով:
- ** Գառնիկ Նշիկեան 40 արտավար երկիր գնեց՝ այգի անկելու համար:
- ** Յառաջիկայ Երեքշաբթի օր քուէդ Ռամիլովարու կան ընտրելիներուն տուր, և աշխատէ որ բարեկամներդ ալ նոյնը ընեն:
- ** Սուրբաա և Տիկին Կսկոսեան աղջիկ զաւակ մը ունեցան ամսոյս 17ին:
- ** Փրօֆ. Մեղան՝ իր ընտանեք հանդերձ Պօթընէ քաղաքս եկաւ՝ հոս հաստատուելու համար:
- ** Պետրոս և Տիկին Մանոյեան աղջիկ զաւակ մը ունեցան շաբթուս մէջ:
- ** Առջիկներու շաբաթն է այս: Գրիգոր և Տիկին Առաքելոսի նորածինն ալ, որ աշխարհ եկաւ անցեալ Չորեքշաբթի օր, աղջիկ մըն էր:
- ** Տ. Գուրեան երկու "լաթ" հոդ գնեց քաղաքս մէջ:
- ** Փրօֆ. Գ. Մալարեան Նօրթէ Տըթօթայէն քաղաքս եկած է՝ օգափստութեան համար:
- ** Ստացանք օրինակ մը նոր հրատարակուած Վազգէն երգարանէն որ կը բաղկանայ 600 երեսներէ ու կը պարունակէ շատ մը հին ու նոր երգեր: Այս հատորը լոյս տեսած է Հայրենիքի տպարանէն. Գինն է մէկ ու կէս տոլար:
- ** Խ. Քենտրեան մեզ կիմացնէ թէ իր գնած երկիրը ոչ թէ քսան՝ այլ քառասուն արտավար է որուն կէսը այգի է ու մնացածը՝ պարտապէս հող:

Ա.Ձ.Գ

Հովտ. Չիլի Հինգշաբթի երեկոյ ժամը Տին Ֆ. Հ. Գ. Միութեան ընդհանուր անդամական ժողովը նիստ պիտի ունենայ Միութեան ակփական սրահին մէջ: Կը ինդրուի բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ այս կարևոր ժողովին: Ի զիմաց Ֆ. Հ. Գ. Մ. Ընդհ. Ժող. Մ. Ալմեան, Ատենադպիր

Ս Ի Ր Ա Հ Ա Ր Ի Մ Ը Ա Ղ Ե Ր Ս Ը

—o—

- Սիրականս, ալ չի խպնիմ չ'ամաչեմ,
Ռաքդ ինկած կուլամ, կողքամ հառաչեմ.
Ձիս մի՛ մերժեր, յանուն երկնից կ'աղաչեմ,
Աշխարհիս մէջ դու մէկ հատիկ Սիրական:
- Ինչո՞ւ արդեօք լուռ կը մնաս՝ չես խօսիր.
Դեռ յուսատու բառ մի՛ անգամ ինձ չըսիր.
Ժպիտ մը գէթ դէմքիդ վրայ՝ անբասիր
Ձի տեսայ դեռ. ի՛նչ անգութ ես, Սիրական:
- Բոպէէ մ'իմ կրնաս ամեն հոգ վանել,
Կասկած, երկիւղ սրտէս ամեն վախ հանել,
Ձիս քու սէրդ՝ սրտիդ տէրը անուանել,
Բայց մոռնջի պէս լուռ կը մնաս, Սիրական:
- Արդեօք ինչե՛ր քեզ խօսեր են իմ մասին.
Գուցէ շատեր իմ ետեւէս գէշ ըսին.
Բայց չարախօսք թոյ կորնչին միասին.
Թշնամիի խօսքին մ'անտար, Սիրական:
- Կասկածոտ ես՝ աչքդ գրեզ կը մատնէ,
Ալեկոծեալ հոգիդ սիրտդ կը հատնէ.
Բայց իմ սէրս սրտիդ գրան կը զարնէ.
Բայց իմ առջև անոր դռներ, Սիրական:
- Աւ հերիք չէ՞. ինչո՞ւ բերանդ ես գոցեր,
Սիրաս կրակ ձգեր՝ հոգոյս մէջ բոցեր.
Ձիս գերեզման կրնան տանիլ այս խոցեր՝
Թէ չի գթաս իմ վիճակիս, Սիրական:
- Նաւի մը պէս ծովին վրայ ալեկոծ՝
Խողալիք մ'է եղած սիրտս. ցաւ ու կոծ
Բարդած մնան սրտիս վրայ ծանր ու հոծ.
Ժպիտով մը վանէ զանոնք, Սիրական:
- Ինչ որ ուզես սիրոյդ փոխան կուտամ ես,
Դրամ, սակի, սիրտս ալ նուէր՝ հագիս քեզ.
Եթէ պահ մը դու ալ խորհիս ինձի պէս՝
Ես երջանիկ՝ դու գոհ կըլլաս, Սիրական:
- Ստիպն թող որ սիրտս երգէ՝ լայ հոգիս,
Մինչև ամպեր ցրուին երթան՝ դու ժպտիս.
Ճակտէդ քաղեմ համբոյր, սեղմեմ քեզ սրտիս,
Աւ անբաժան ապրինք սիրով, Սիրական:

Հ. Է.

Մ Է Թ Ր Ա Փ Օ Լ Ի Թ Ը Ն

ԿԵՆՍՅ Ս Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ս Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Գ Ր Ի Գ Ո Ր Կ. Ն Ա Լ Պ Ա Ն Տ Ե Ա Ն, Գործի.
Լօն Էնտ Սէյվինկ Պէնք Պիլտինկ. Սենեակ, 14 և 15
Փ. Օ. Պաքս, 1285: Թէլէֆօն, պրու 272

Յ. Քալաճեան՝ ցաւ ի սիրտ կը լսենք թէ մեռած ու իր զաւակներն և այրին յետին աղքատութեան մէջ թողուցած է: Եթէ հանգուցեալը գէթ հազար տոլարի համար ապաքսովագրած ըլլար իր կեանքը՝ աղքատութիւնը ժառանգ չէր թողուր իր տան: Ապահովագրէ կեանքդ քանի որ ուշ չէ: Կը տեսնուինք զարձեալ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033

ՃէՅ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի Համար Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Ալենթ

Ուրիշ երկիրներու Համար

Տարեկան 10 Ծրանգ — — Վեցամսեայ 5 Ծրանգ

Բաժանորդացիները Կանխիկ Վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը շրջուին Խմբագրութեան հետեւեալ հասցէիւ:

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year.....\$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՂՆՕ, ԲԱՒԻՅՕՐԷՆԻԱ. ՆՈՅ. 1, 1902

Մ Ո Ռ Յ Ո Ւ Ա Ծ Ի Ն Դ Ի Ր Ն Ե Ր

— 0 —

Թիւ 1.

Անցեալ շաբթու, ինչպէս որ հրատարակած ենք տարբեր սիւնակի մը մէջ, թոքախտաւոր հայ մ'ալ՝ երկարատեւ հիւանդութենէ մը յետոյ՝ մեռաւ յետին աղքատութեան մէջ: Այս անձ ալ՝ ուրիշներու նման հոս եկած էր ապաքինելու նպատակաւ. բայց շատ ուշի մնացած էր: Հիւանդութիւնը անբուժելի աստիճանի մը հասնելէ վերջ ճանապարհ ելեր էր հոս գալու Համար: Յրէզնոյի օդը չէր կրնար նոր թոքեր գնել անոր մաշած կուրծքին տակ:

Այս ցաւալի դէպքը առիթ կուտայ մեզ անդրադառնալ կարգ մը մոռցուած խընդիրներու վրայ, որոց առաջինը մօտէն յարաբերութիւն ունի արեւելքէն եկող հայ չքաւոր թոքախտաւորներու հետ:

Ցաւալի է ըսել որ այս առողջութիւն փնտաող հայ փոքրայիններէն քիչեր միայն կրցած են իրենց օձիքը ազատել այդ դժոխային հիւանդութենէն. իսկ մնացեալը կամ հանգանակութեամբ արեւելք գնացած՝ մեռած են և կամ կը ննջեն հիմայ մեր ազգային գերեզմանատան մէջ, ուր ննջեցեալներու գուցէ մեծամասնութիւնը կը կազմեն ասանք: Պատճառը շատ պարզ է: Գործարանական կեանքի անվարժ մեր ազգայիններէ շատեր երբ այս հիւանդութենէ կը բռնուին՝ փոխանակ օգի և գործի անմիջական փոփոխութիւն մը ընելու՝ կը սպասեն, քոչկի կերթան, դեղ կ'առնեն, բայց կը հազան ու կը սպասեն՝ մինչև որ հիւժող հիւանդու-

թիւնը անբուժելի աստիճանի մը հասնի. Ահա այս վիճակի մէջ՝ և ընդհանրապէս բոլոր դրամը լմնցուցած՝ հայ թոքախտաւորը Յրէզնօ կուգայ՝ "բան մը կը նենք" ի անվտանգ վարդապետութեան յուսարով:

Վերջի քանի մը տարիներուն մէջ, երբ հայ հիւանդին ընթացքը դէպ ի Քալիֆօրնիա դարձաւ՝ թիւրքիա երթալը վտանգաւոր ըլլալուն, այս խեղճ վիճակաւ հոս հասնողները մտահոգութիւն պատճառող թիւ մը կազմեցին, և ընդհանրապէս ծանր բեռ մը դարձան հայ ժողովրդին վրայ, որ կազմակերպեալ գորութիւն մը կամ բարեգործական յատուկ մարմին մը չունէր՝ ըստ արժանւոյն՝ զանոնք կրնալ հոգալու համար: Բայց ասով մէկտեղ՝ սա թոքախտաւորներէն քանիններ իրենց ընտանեաց ետ զրկելու, ուրիշները դարմանելու, ապրեցնելու և վերջապէս թաղելու համար հանգանակութիւններ միշտ եղան և կը շարունակուին տակաւին այս գաղթականութեան մէջ: Այս երբեմն երբեմն դրամ հաւաքելու գրութիւնը ոչ միայն հիմնական դարման մը չէր կրնար ըլլալ՝ այլ տրտունջի ու բողոքի ձայներ կը բարձրացնէր ամեն կողմերէ: Եւ արդարեւ արեւելեան նահանգներու Հայոց անկեղանոցն ու գերեզմանատունը կը լլար Յրէզնօն, որոյ հայ գաղութը ասանձինն ու անկազմակերպ չէր կարող իր պարտականութիւնը լիովին կատարել զիպի իւր անկեալ հայրենակիցները որք իրեն կուգային օգնութեան համար: Եւ եղաւ ժամանակ մը երբ մեռեալ մը թաղելու համար քանի մը տարբեր հանգանակելը դժուարին գործ մը նկատուեցաւ: Կարգադրութիւն մը ընել հարկ էր, քանի որ անկարելի էր թոքախտէ բռնուած մէկը ետ կեցնել Քալիֆօրնիա գալէ՝ հոգ չէ եթէ այս տեղական դժուարութիւնները հազարապատիկ ծանր նկարագրուէին իրեն: Ծովն ինկած մարդը օձին ալ կը փաթթուի՝ ազատելու համար: Եւ քանի որ ո'չ հիւանդին ընթացքը կարելի էր փոխել և ոչ ալ Հնարաւորութիւն կար թոքախտաւորներ պատրաստող արեւելեան գործարանական կեանքը փոխել, ուստի այս դժուարութիւններու առաջն անելու համար մէկ միայն ճամբայ կը մնար, այն էր միջոց մը գտնել՝ հոս եկող աղքատ հիւանդը հոգալ կարենալու համար:

Այս մասին մեր Ազգային Հոգաբարձութիւնը շատ դեղեցիկ ու գործնական խորհուրդ մը յղացաւ. քանի մը ամիսներ առաջ, ու ազգային թերթերու միջոցաւ զայն իբր առաջարկութիւն ներկայացուց հասարակութեան, որ ի հարկէ ի սրտէ համակրեցաւ գաղափարին: Այս առաջարկութիւնն էր՝ յանուն Հայութեան Յրէզնոյի մօտերը քսան կամ քառասուն արտավար այգի մը գընել, ու անոր մէջ պատսպարան մը կամ հիւանդանոց մը շինել՝ ամեն հայ անկեալի կամ հիւանդի համար անխտիր:

Շատ մեծ ծախուց կարօտ առաջարկ մը չէր այս, թէ և տեղական պայմաններու անտեղեակ մէկի մը կըրնար տարբեր տպաւորութիւն ընել: Քսան արտավար այգիի մը տարեկան եկամուտը բաւականն աւելի է այսպիսի հաստատութեան մը բոլոր պէտքերն ու ծախքերը հոգալու համար: Սակայն ոչ մի տեղէ քաջաբերական խօսք մը չի լսուեցաւ. սաչափը գիտենք սա-

կայն թէ քանի մը հանրային մարդիկ անգործնական նկատած էին առաջարկը, վասն զի քանի մը հազար տուրար հանգանակելու անհրաժեշտ պէտքը կար: Ամերիկեան հայ մամուլն ալ հարկ եղած զարկը չի տուաւ այս խնդրոյն, որովհետեւ նա տարբեր հարցերով զբաղած էր: Եւ կերևի թէ այս պարագաները վհատութիւն պատճառեցին Հոգաբարձութեան որ այդ օրէի վեր հիւանդանոցի մը խօսքն անգամ ըրած չունի:

Մոռցուած խնդիր մ'է այս սակայն, զոր յիշեցնել կուզենք այսօր և կը շեշտենք անոր կարևորութեան վրայ: Զայն գործնական ձևի մը վերածելու համար կարող մարդիկ չեն պակսիր հոս: Այդպիսեաց համար պարտականութիւն մ'է հետամուտ ըլլալ՝ այս մոռցուած խնդիրը կենդանացնելու համար: Տարակոյս չի կայ թէ հայ ժողովուրդը պիտի ուղէ ամեն տեղէ մասնակցիլ այսպիսի հանգանակութեան մը՝ մի անգամ ընդ միշտ հայ հիւանդին պատուարան մը կանգնելու համար այս քաղաքիս մօտերը որ յարմարագոյն վայրն է բոլոր Միացեալ Նահանգներու մէջ՝ ներկայ պարագաներու տակ:


Եւ արդարև դրամը չէ որ կը պակսի այսպիսի կարևոր գործի մը համար, այլ դրամը հաւաքելու յօժար և աշխատող մարդիկ կուզենք միայն: Հաստատ կամքը դրամ է այսպիսի գործերու մէջ:

Հայ գաղթականութիւնը տարին մօտաւորապէս տասը հազար տուրար կը ծախսէ իր տարբեր եկեղեցիները պահելու համար: Տասը հազար տուրարէ շատ աւելի նա ծախսեց վերջի քանի մը տարիներուն մէջ՝ իր սեփական եկեղեցիները կառուցանելու համար: Այս դրամները հաւաքելու և գոյացնելու շատ յօժար ժողովուրդ մը ունինք, որ կուտայ և առատածուն է բարեգործական ու կրօնական գործերու համար: Բայց երբ խնդիրը կուգայ բարեգործական այսպիսի ձեռնարկ մը ընելու՝ զգուարութիւններ յառաջ կը բերուին ու գործը ամուլութեան կը դատապարտուի: Սակայն եթէ հայ գաղթականութիւնը տարին տասը հազար տուրար յանձն կառնէ ծախսել՝ հոգիներ պատրաստելու անծանօթ կեանքին համար, չենք կրնար տարակուսիլ թէ պիտի սիրով ուղէ այդ գումարին կէսը յատկացնել հայ կեանքեր փրկելու այս ծանօթ աշխարհին համար՝ եթէ հանրային գործով հետաքրքրուող անձինք ու ազգային իշխանութիւնք ոյժ տան գործին:

Մեր Հոգաբարձութիւնը որ առաջնութիւն ունի սա գործին մէջ, շարունակելու է զայն, ու անդրգուելի յամուութեամբ փակելու է անոր՝ մինչև որ իր առաջարկը իրականացած գտնէ:

* * * * *

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ




Քաղաքական պայքարը մնալու վրայ է: Երեք օր վերջ հանուր ժողովուրդը, մամուլն ու քաղաքացիտը կը դադրին այս մասին կռուելէ ու քննադատելէ: Երկու կողմի կժու հակառակորդները՝ ընտրութենէ վերջ կը խոնարհին մեծամասնութեան կողքին առջև: Զիրար դատափետտող թշնամիներ կը հաշտուին ու կըսկսին յարգել զիրար. զի այս թշնամութիւնը ժամանա-

կաւոր է ամերիկացւոց մէջ, և ի՞նչ թշնամութիւն
Այս երևոյթ պէտք չէ՞ որ բարոյական մեծ դաս մը ըլլայ հայերու համար որ տակաւին չենք սորված անձնական ու հանրային գործերը զանազանել իրարմէ:

Եթէ այս մեծ կուսակցութիւններու վարմունքը՝ թէ՛ պայքարի ժամանակ և թէ՛ անկէ դուրս՝ բաղդատելու ելնենք մեր ազգային կուսակցութեանց հանապազօրեայ վարմունքին հետ միայն՝ մեր միակ տպաւորութիւնը սա կըլլայ թէ տակաւին շատ մանուկ ենք հանրային գործերու մէջ: Անոնք ոչ միայն ամենօրեայ յարարելութեանց՝ այլ պայքարներու ամենատաք վիճարանութեանց մէջ անգամ գիտեն անհատը և անոր արժանիքը յարգել ու ԿՈՒՒԻՒԼ լոկ սկզբունքի համար: Բայց մենք ու մեր ազգային կուսակցութիւնները . . .

* * * * *

ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՄԱՍԻՆ



Տիգրան Մանուկեանի դատը վճարեկ ատենին ներկայացնելու համար դրամ գոյացնելու նպատակաւ՝ քանի մը բարեսիրտ ազգայիններ հանգանակութիւն մը բացել են քաղաքիս Հայոց մէջ: Ամեն անոնք որոց անձամբ դիմելու դիւրութիւն չունին այս հանգանակիչք՝ կը խնդրեն որ այդպիսիք իրենց նուէրները լըրագոյս խմբագրութեան յղեն ու իրենց ստացականները ստանան: Բարի գործ մ'է այս, և ամեն կարող անձ օգնելու է անոր:

ԱԶԳ— Յառաջիկայ Երկուշաբթի երեկոյ Ծ. Հ. Գ. Միութեան սրահին մէջ Հայ Քաղաքական Ակումբը վիճարանական ժողով մը պիտի ունենայ, ուր հայ ասենախօսներ պիտի վիճարանին ներկայ քաղաքական խնդիրներու վրայ: Ամեն հայ հրաւիրուած է ներկայ գտնուիլ այս ժողովին: Տիկիներու ներկայութիւնը շատ փափաքելի է:

Ըրդհանուր Դատախազի համար
Տիկլըր Ս. Չորչ,
Կանոնաւոր Ռամկավարական ընտրելի:

Քաւնթի Բնրքի համար
Վ. Օ. ՄԱՅԼՍ,
Կանոնաւոր Ռամկավարական ընտրելի:

Քաւնթի Բիքօրտըրի համար
Չարս Մ. Մաք Քարտըր,
Կանոնաւոր Ռամկապետական ընտրելի:

Թաքս Քօլլէքթըրի համար
Ճ. Պ. Հանքաք,
Կանոնաւոր Ռամկավարական ընտրելի:

Շէրիֆի համար
Ճ. Տ. ՔԱԼԼԻՆՍ,
Կանոնաւոր Ռամկապետական ընտրելի:

Ո շ շ ա դ ր ո շ ք ի շ լ լ ը

Սեր յաճախորդներէ շատեր կը տրտնջան թէ իրենց ապաստանքները ստանալու համար յատուկ մէկը չենք զրկեր իրենց, և թէ այս անպատեհութիւնը միայն կըստիպէ զիրենք ուրիշ տուններու հետ առևտուր ընել: Այս տրտնջը բառնալու և նոր յաճախորդներ ունենալու նպատակաւ՝ ասկէ վերջ մտադիր ենք շարաթը քանի մը անդամներ՝ յատուկ կառքով մէկը զրկել ամեն անոնց տունները որոնք կանխաւ հաճին փափաք յայտնել այս մասին: Շատ կարևոր է այսպիսիներէ լսել անձամբ կամ երկտողով մը, և կը յուսանք որ մեր բարեկամք կը կատարեն այս խնդիր՝ վստահ ըլլալով թէ գոհացում կու տանք իրենց կատարելապէս: Կը փափաքինք ծանուցանել նաև թէ ամեն անոնք որք կառք (պըկի) գներու նպատակ ունին՝ գներէ առաջ անգամ մը մեզ դալով կրնան օգտուիլ: Այն արևելեան մեծ տունը որ կը ներկայացնենք այժմ, կառք շինող համբաւաւոր ընկերութիւն մ'է՝ որուն ապրանքաց տեսակին ու չափաւոր գներուն դէմ ոչ ոք կարող է յաջողութեամբ մրցիլ: Մնանք յարգանքօք.

Մ. Մ. ՆՇԻԿԵԱՆ,
Նպարավաճառ.

1730 Թուարի փողոց, Ֆրէզնօ. Թէլէֆօն, Ուայթ 486
Հիւզ Հօթէլի Շէնքին մէջ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՎՅՈՒՄ

Ազգային Հոգաբարձութեան խնդրանք՝ յառաջիկայ Նոյեմբեր 9ի Կիրակի օրը, կէս օրէ վերջ, ժամը երկուքին Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Ընդհանուր Ժողովը արտաքոյ կարգի նիստ պիտի ունենայ նոյն Եկեղեցւոյ մէջ՝ կարգ մը կարևոր խնդիրներ լուծելու համար: Ի մէջ այլոց ժողովին պիտի ներկայանայ Առաջնորդի ընտրութեան ասկախ խնդիրը:

Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ լինել անհրաժեշտ այս կարևոր ժողովին:

Ի Դիմաց Ընդհ. Ժող. Ս. Երր. Եկեղեցւոյ
Ատենադպիր
Մ. Աւէմեան

Յ. Գ. Սմե՛ն անոնք որք տակաւին ստորագրած չեն Եկեղեցւոյ կանոնադիրը, կը հրաւիրուին ընդ փոյթ ստորագրել զայն՝ որպէսզի ձայն ու քուէ ունենան ներկայ կարևոր խնդիրներու մէջ:
Ֆրէզնօ, Հոկ. 2 1902

ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Մեզի հետ գործ ունեցող ո և է Հայու հարցուր և տես թէ մեզմէ գոհ եղած չէ՞: Մենք Հայոց աւելի շատ կալուած կը ծախենք քան միւս բոլոր գործակալութիւնք ի միասին առնելով: Եկ և մեր ունեցած Այգիներու, Ծառատաններու և ուրիշ ամեն տեսակ կալուածներու գները լսէ:

Մօր Եշ Նիս

1150 Ա Փողոց. Ֆրէզնօ

ԾԱՆՈՒՅՈՒՄ ՉԱՄԻՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԳԵՊԱՆՆԵՐՈՒՆ

Ընկերութեան պատկանող այգեպանները հետևեալ կանխավճարները պիտի ստանան.

Իմփէրելու քլաթըր,	Փաւնալին	5	սէնթ
Տիհէշա քլաթըրս	"	5	սէնթ
Ֆէնսի քլաթըրս	"	5	սէնթ
3 քրաւն Լընտըն Լէյըրս	"	4	սէնթ
2 քրաւն Լընտըն Լէյըրս	"	4	սէնթ
4 քրաւն ըսթանտըրս	"	3 և կէս	սէնթ
3 քրաւն ըսթանտըրս	"	3	սէնթ
2 քրաւն ըսթանտըրս	"	2 և կէս	սէնթ
Սիտէս մաքթ. ըսթնարտ	"	2 և կէս	սէնթ
Սիտէս սըլթանտս	"	2 և երեք	չորրորդ սթ.

Քալիֆ. Բէյըլին Կրօուըրս Ասօսիէշըն
Ա. Լ. ՍԷՅԸՐ, Ատենադպիր

Ընտիր կերակրչքի հասար գևա

ՍԻԹԻ ՊԷՅԻԸՐԻՆ

— Ճ. Մ. Քօհլըր և Փիքֆօրթ, Ճաշարանատարք —
1138 ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

ՍԱՆԹԱ ՅԻ

** ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԼԱԻՍԳՈՅՆ ԳԻԾԸ **
Ճամբորդին համար ամեն հանգիստ և զիւրութիւն

Սանթա Յի երկաթուղեաց ճամբան լաւադոյնը, կարճ ու ամենէ արագն է՝ արևելք երթալու կամ արևելքէ հաս գալու համար:

Ուղղակի շոգեհասային և երկաթուղիի տոմսեր Հին Աշխարհի ամեն կողմերուն և ա՛հեն կողմերէն գալու համար: Տոմսի գրամները կրնան հոս վճարուիլ. եթէ տոմսերը չի գործածուին՝ գրամը ետ կը արուի: Սան Ֆրանսիսկօ երթալու լաւադոյն ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը արուին թէ՛ կայարանը և թէ՛ քաղաքիս գրասենեակը՝ ի թիւ 1031 ձէյ փողոց, Ֆրէզնօ: Թ. Ա. ՃՕՆՍ, Գրծկ.



Ս Ա Ն Թ Ա Յ Ի Երկարուղեաց Ընկերուշքի շ լ լ ը

ԿԸԾԱԽՈՒԻ

Հարիւր վաթսուն էքքերոց առաջնակարգ այգեստան մը որուն կէսը այգի է, իսկ միւս կէսը դեղձենի: Տուն, ախոռ, կառքեր, ամեն տեսակ գործիներ, թրէյզ, սընտուկներ, ձիեր են. Մանրամասնութեանց համար գըրել կամ դիմել խմբագրութեանս:

Ֆ Ր Է Ջ Ն Օ

ԸՆՏԸՐԹԷՅՔԻՆԿ ՓԱՐԼԸՐՍ

ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, ՏԵՐԵՐ
1154 ձէյ փողոց, — Ֆրէզնօ. — Թէլէֆօն Մէյն 160

GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒԻ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ.

1109 ձէՅ Փողոց, — Ֆիւսք Պլաք — Ֆրէզնօ.
Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց զինները բաղդատաբար ուրիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահացնէք զուք զձեզ այս կարեւոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ստանալ ճՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ:

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ

ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ

Sorushy Pashkian ԸՆԿ.

Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

Ֆ Ր Է Ջ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆԵՍԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻՆ
ԱՅԼՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ

Թէլէֆօն — — — Մէյն 24
ՖՐԷՋՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ.

ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՑԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը ունիս, կամ եթէ կը փափաքիս թուրքիա կամ այլուր երթայ, թիքէթի համար դիմէ Աըթրըն Փըսիքիք ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու է մէկ կէտին համար ստան կը վաճառէ միենայն ընկերութիւնը: Աւելի տեղեկութեանց համար դիմել առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՍՆԷՆ
Տիվիթըն Փասինճըր Էյճընթ: Սիթի Թիքէթ Էյճընթ
Քաղաքի զրատենակը—Թիւ 1013 ձէՅ Փողոց,
Նոր Փաթըրսըն Պլաքին առջև

ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ

Վ. Մ. ՃԱՆՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ԿԱՌՔԵՐՈՒ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ

Հարնէս, Մտրակ և Ծածկոցներ: Այս դաշտի մէջ
ամենաաժան և ընդարձակ Վաճառատունը
1817—1819 Թուարի փողոց, Փօսթ Օֆիսին դիմացը:

Ճ. Մ. Սերոբեան, Ճ. Պաննըր, Յ. Մ. Սերոբեան

Սան Ռոքիին Վալի Լմնտ Քօ,

Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ԱՅ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆորնիա:
Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

DR. GAZARIAN DENTIST

Տրք. Յ. Ղազարեան,

ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Չանա Պլաք, ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

Գահացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գործ
հացում Յաճախորդներուն: Գիները միշտ չափաւոր:
Թէլէֆօն — — — — — Ուայթ 231

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ամենաբարձր գին կը վճարեն

ԹՈՒՁԻ, ԴԵՂՁԻ ՈՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՉՈՐ ՊՏՈՒՂՆԵՐՈՒ:

ՖՐԷՋՆՕ ՄԱՔԱՐՕՆԻ ՅԱՔԹԸՐԻ

*** Ա. ՏԻԱՎՉՉԻՕ — ՏԷՐ ***

Սան Պէնիթօ փողոց, Այի մօտ: Ֆրէզնօ, Քալիֆ.

Ս. Ա. ՇՈՒԱՅՉԸՐ,

ՀԱՐԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾՍԾԿՈՑՆԵՐ, ԵՒՆ.

Ամեն տեսակ Նորուգուսներ կըլլան փութով:

1920 Մարտիփողա Ըսթրիթ, Ֆրէզնօ:

ՃԻՆԹՐՈԹ - ՊՐՈՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ

Մեծաքանակ Վաճառականք Նափայի, Սընժայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ

Բիւսթիզի ապահով դեղ ճանչցուած ՈՒԻԹԸՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ Ըուբերուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

Քասրդ Երասրներ

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկալեն ընդունի Հայ այգեպաններու արտադրած պտուղներն և՛ կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ գոչ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

J. K. ELLEZIAN

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Նպարեղէններու, պտուղի, սիկարի, ծխախոտի, թէյի, սուրճի, պէյքիսի փափաղի, ձիթալի ևն.

1145 ԱՅ փողոց —Ֆրէզնօ— Թէլէֆօն Պլաք 773

Պարհօք Ըսրէյարրս,

Է՛Լ և Ֆրէզնօ փողոցներ, Պարտիզին դիմացը Թէլէֆօն, մէյն 174 — — — — — Ֆրէզնօ Վարձու կառքեր. ճամբորդներու ձիերուն հողատարու թիւն: Գնել և ծախել: Բոլոր գիշերը բաց ենք:

ԳՆԱ ԱՌ

ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵՍՅ ԲՍՆՉԵՐՈՒ, ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀՍՄԱՐ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՖՈՆ ԳՐԷՉՆՕ, ԳԱԼ ԷՔՆԷՆԶ —ԹԻՒ 2

Ձեր Ապահովագրութեան համար դիմեցէք առ

Պ. Ֆ. Շեփհրրտ եւ Ընկ.

1123 ՃԷՅ Ըսթրիթ

Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդք միշտ գոհացում կտանան:

Ձեր ԱՏԱԽՉՆԵՐԸ ԳՆԵՅԷՔ

Ա. Ա. ՓԻՐՍ

ԱՏԱԽՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷՉՆՕ ԳԱԼ.

ՏԻՐ. Յ. Հ. Բարսեղեան

ՖՐԷՉՆՕ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆԻՔ ՊԻԼՏԻՆԿ ՍԵՆԿԱԿ 16 17, ԹԷԼԷՖՈՆ ՊԼԱ 492. Ֆրէզնօ Գալ.

Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն Ե Ր
Ընտրութիւն. Նոյ. 4, 1902

Փրպիք Ատմինըսթրէյթրի համար

Բ. Տ. Չիթթրևուրն

Ռամկավարական կանոնաւոր ընտրելի:

Հանրապետական կանոնաւոր ընտրելի

Բ. Ն. Պարսրոյ

Քալիֆի Բիքօրթրի համար

ԼՏԲԹ. ԱՆՃԸՍ Պ. ՔՕՎԱՆ
ԲՕՐՕՆԸՐԻ ՀՍՄԱՐ

Ռամկավարականներու կանոնաւոր ընտրելի:

Գաւառական Գանձապետի (Քալիֆի Թրէժըրը) համար

Ս. Ս. ՄԱՐՇՐԼԻ

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի

Ճ Օ Ն Վ. Կ Ի Է Ր Հ Ա Ր Տ,

Հանրապետական ընտրելի ՇԷՐԻՖԻ համար
Ձեր օգնութիւնը կը խնդրուի յարգանքով:

Ընդհանուր Գառախաղի համար

Ճ. Վ. ՃՕՆՍ

Հասարակապետականաց ընտրելի

Թաքս Բօլլէքթրի համար

Ա. Հ. Կրիլի

Կանոնաւոր Հասարակապետական ընտրելի:

60րդ Երեսփոխանական Նահանգաբաժնէն Երեսփոխանի համար.

Ճ. Օ. Թրէյարր

Կանոնաւոր Հասարակապետական ընտրելի:

Կանոնաւոր Ռամկավարական ընտրելի

Ճ. Վ. Բաւիթի

Երրորդ քաղաքաբաժնի համար (Ֆրէզնօ) արդարութեան դատաւոր (Ճըսթիս օֆ աը Փիս):

Ֆրէզնոյի գաւառական Օտիթրի համար

Փոյ Հրնչ,

Ռամկավարական կանոնաւոր ընտրելի:

Երրորդ քաղաքաբաժնի Արդարութեան դատաւորի (Ճըսթիս օֆ աը Փիս) համար:

Ճօն Ճօնսէն Որդի

Հանրավարական կանոնաւոր ընտրելի:

Բօրօնրի համար

ՏԻՐ. Վ. Թ. Պըրքս,

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի